



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ

ԵՐ ԶԱՅԻՆԱԿԱՆ

ԱՐԵՎԻԿԱ ՏԵՐՈՒ

ԽԻՆ 33

Փետրուար 25/9 ՄԱՐՏ 1912

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԻ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՍ
ԵՍ ԵՍ
ՏՈՒՐԻՄ

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԻ», Հայ Կաթողիկէ Պատրիարքարա ի պատշոնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոց. ամեն լուրերն՝ համառօտաւ. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մասնաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերքեր կարդալու:

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՆՆ

Թուրքիոյ համար.

Տարեկան Դնէկ. արծ. 40

Վեցամսեայ » » 20

Առաստախման.

Տարեկան Ֆրանք 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանգո-Բուսթըն եւ կամ մէյ մէկ դրոցոյ նամակադրութեամբ:

Մէկ քիւ 1 Դահէկան

Նամակ, յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԻ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghiché Arzakank

Patriarcat Arm. Catholique

Péra

Constantinople


ԾԱՆՈԹ. 1 — Ահմէտ-Քալիօն կը հրատարակուի Շաբաթ օրերը:

2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակիլ իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3. — Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

4. — Ցօղուածներու ձեռագիրները պէտք է զրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ Տառի

Փետր. 25/9 Մարտ 1912

Թիւ 33

ԱՏՆԻՅԷ ՎԷ ՄԷԶԱՅԻՊ ՆԷԶԱՐԷԹԸ ԱՆԻՅԷՍԻՆԷ

ԷՐՄԷՆԻ ԳԱԹՕՒԻՔ ԲԱԹՐԻԳԽԱՆԷՍԻ ԹԱՐԱՅԸՆՏԱՆ

ՔԱԳՏԻՄ ԳԸԼԸՆԱՆ ՄՈՒԲԵԹԵՐԷ

Բ.

Պաշտօնէ իյզահ իտիտիկի վէճիչէ պէշ այ կէշօիշ օլաւըն հալաւ,
- ինթիտապաթա պաշտօնըլամադը տըր. զիրա մէճիսի մէզքիւր նամզէտ-
լէրին տէֆթէրինի Սինոդ Մէճիսինէ իպրազաան իմթինա իտիյօր իտի.
վէ էվվիլ էմրաւ նիզամնամէի միլլիյի հիւքիւմէթ ճանիպինաւէն րէամէն
թանըլմըջ օլան քէնաի րէիսի րուհանիլէրի պուլունմազսըլըն թանդիմ
իթմէք աալիէսինաէ իտի: Սինոդ Մէճիսի պուլունա չիտաէթլէ գարչը գօյ-
տու վէ Բաթրիք ինթիտապընտան սօնրա տէրհալ նիզամնամէի միլլի լա-

յիհասըլա իշթիղալ իթմէյի վատ իթաի . բիսգորոսար հէյեթինին ֆաալ խաթթը հարաքեաթը միւվաճէհէսինաէ էվլէլ էմրաէ Սուսնա բիսգորոսը թէրգեան էֆէհաինին բաթրիդլիք ինթիսապաթը իճրա իաիլտի . պատէհու բիսգորոսար վէ բէիալէրի պլիթթիֆազ վառլարը վէճհլէ նիզամնամէ լայիհասընըն թէադիգինէ շուրու էթմէք իաթէտիլէր , լաքին լայիհաի մէզքիւրէնին հէնուզ թանդիմ իաիլմէմիշ օլադընը 'հախսո' բէրաքէնթէ քեադըտ իւզէրինէ օգուսմայաճազ սուրէթաէ վէ օլ տէրէճէ թաահիհաթլա մէմու վէ մուհարրիւրինին պիլէ գրաաթ խոէպլիմէտիկի սուրէթաէ եադըլը պուլունտըղընը կէօրմէքլէ թէհայիւր վէ թէաճճիւպտէ դաադլար . քէնտի տաիրէի բուհանիլէրինաէն սէքիզ այսան պէրու դապուպէթ էսաէն բիսգորոսար իսթիճալը ալաթթլէրի հասէպլիլէ մէզքիւր լայիհասընըն թանդիմի ուզուն աիւրէճէյի անպաշրլադընտան վէ լայիհաի մէզքիւրէ հադըրլանըպ էվլէլ էմրաէ թապ իաիլէրէք թէադիզ օլունադ վէ օլպապտէքի միւթալաալարընը թահրիւրէն պիլտիրմէք իւզրէ պատէհու բիսգորոսարա պիւրէր նիւսիսէսինին իրսաի թէգարուրէր էյլէմիշ օլմաղլա, Սինոդ տադըլար . ֆիհադիգա Բաթրիզ հազրէթլէրի պիւր գաշ այ սօնրա թապ իաիլմիշ օլան լայիհայը ախզ իաէր իթմէլ 1911 սէնէսինին 17 քեանունը սանի թարիկլի պիւր թահրիւրաթը ումուսիյէսիլլէ հէր պիւր բիսգորոսա պիւրէր նիւսիսէսինի իսրա էյլէտի . էրմէնի Գաթթիլք բիսգորոսարը ճահիւրինաէն Բաթրիզխանէյէ վարիտ օլան ճէվապլարըն քեաֆէսի միւթթէհիա իւլ մէէլ իտի . եէնի լայիհայը Բաթրիզի միւշարիլէյհ կիպի հիշ պիւրի թաաթիզ իթմէյօրաը : Բէք մուհիզ օլան էֆքեալարընճա շու հապու մաստէնին թաաթիլի օլմաղլա , հօգարըսան սաղըլյա թէքմիլինի եէնիտէն եաքմազ լադըմ կէլիյօրաը . վէ Գաթթիլք ֆիլիսէսինի ագաիտ վէ էասաթընա սէքթէյի ինթաճ իտիյօրաը . պինաէնալէյհ սուրէթը թէսվիյէսի դայըր գապիլ վէ գապուլի դայըր միւմքին օլմաղլա ըկատ իաիլաի . իշթէ Գաթթիլք ալէմինին մուճիպը նէֆրէթի օլան մէզքիւր իթիլաֆըն պիւրինճի տէվրէսի :

Պու լայիհատա իճրաի հիւքմ իտէն զայէլ իապալ վէ մէրաւ Գաթթիլք ճէմաաթը արապընա բարլամէնթօ ուսուլինի իախալ իթմէքլէ պէրապէր բաթրիքլիլէ միւնհասըր վէ մախսուս օլան մուհիթի բուհանիլի իսթիլատան իպարէթ իտի :

Ձաթը հազրէթի Բաաիլսահի թարաֆընտան ճէմաաթընը ըկիտի բուհանիտի սրֆաթըլա բէամէն թանըլմըշ պուլլնան դաթ , պու լայիհա հիւքմիւնճէ սիւքիւթէ մահքիւմ պիւր տաի շահիտ եէրինէ գաթմ օլույօրաը , վէ ֆիլիսադիգա իշպու մէվհոււմ մէճիտին ըրյաաթթլինէ տլամտան պիւրինին ինթիսապընա թաաաաթի օլընտը : Պիթթապի Բաթրիզէ խաա օլան մէզքիւր ըրյաաթթլին պազը խուսուսը պիլա սէլահիլլէթ օլ ըրյաաթթաէ պուլըլընան նամէշրու բէիաի պիւր գաթ տահա թէչճի վէ թէշիլիզ իաէրէք քէնտիսինին հիւքիւմէթլին վէքիլի օլտըլընը վէ Բաթրիզէ իհտան պուլուրըլ-

մըջ օլան քեաֆֆէի իմթիյաղաթ վէ սէլահիյաթը հաիզ պուլընսըղընը Գաթօլիք ճէմաաթընա կէօսթէրմէսինէ պախա օլտը : Բաթրիգին սէլահիյէթ վէ վապիյֆէսի տախիլինսէքի ոււմուր վէ խուսուսընտա վէ սըրֆ մէսաիլի բուհանիյէ հազգընտա մուխլէրի իլէ պիրլիքսէ գարար իթա իտէն վէշհասըլ միլլէթին ըէխի բուհանիսինտէն տաէմի գապուլ ըէյի խաֆիսինի ըէֆ իթտիրէն հինէ օլ քիմսէ տիր : Տէվլէթ վէ Գիլիսէ միւվաճէհէսինտէ ըէսմէն մէսուլ պուլընան Բաթրիգ պու հալէ գարչը հէրնէ զէման իթիրաղ իթաիյսէ , կէօնա սէօզիւ հիւքմտէն սազըթ իմիշ կիպի քէնտիսինէ իսթիհզա վէ թէզհիֆլէ ճէվապ վէրիլսի , վէ հախօտ մէվզուլի պահա օլան մէսէլէնին քէնտի տախրէի սէլահիյէթի խարիճինտէ օլտըղը իթնան իտիլսի . պու ճէվապլար իսէ ըէտա վէ եա իթիրաղա մահալ պրազմայա ճազ սուրէթտէ վէ իւնֆ ու չիտտէթլէ իթա օլուներտը . նիհայէթ իւլ էմր մէզքիւր ֆըրգաո նամզէտի պուլընան Բաթրիգ հազըթթլէրի պու ֆըրգանըն կէօզիւնտէ պիր զըլլը մէվհոււմ կիպի իաի :

Պալատէ զիքը օլուան էսպապա մէպնի չէրէֆպախշ օլան ֆէրու-միյնի ալիյէ ահքեամընա մուղայիր վէ քիլիսէ գաւանիյնինէ մուխալիֆ օլան մէպուսան չէքլինտէ պէօյլէ պիր հէյէթը թէշրիյէնին Հիւքիւմէթը Սէնիյէ ճանիպլինտէն գապուլ օլուանսըղը վէ օլուանայաճաղը Բաթրիգ հազըթթլէրինճէ թէյազգոււն իտիլմիշ օլտըղընտան միւշարիյէյ Բօմաան պուլընսըղը էսնատէ իշպու հէյիէթի նամէշրուալը հասպէլ վազիֆէ ֆէսի վէ լալլ իթտի . պունա ըաղմէն վէ մէճլիսի մէզքիւրտէ ազա պուլընան ըէհապիյն Բաթրիգ վէքիլի իլէ պիրլիքսէ քեամիլէն չէքիլմիշ օլաըղը հալտէ մաիւղղիքը ըէխի նամէշրու ճէմաաթը մէզքիւրէնին հէկեանէ վէ հազիզի վէ խուսուսի ըէխինին ըօլընը թազլիտէն մէֆրուզ ճիհէթը թէշրիյէյի Բաթրիգին գօնաղընտա սուրէթի ճէպրիյէտէ ինիգատ իթաիրտի , վէ Բաթրիգխանէյէ վարիտ օլուպ մէէլի ճէմաաթըն խարապիյէթինէ ըսամազ գալմասընը մուճիպ օլտըղը իշիւն ֆըրգաի մէզքիւրէյի թէրզիւրտէն իպարէթ պուլընան պիր խալլի բրօթէսթօլարա ըաղմէն վիլայաթա էմրլը իրալ իտէն հինէ պու չախա տըր :

Իմոի ըէխի բուհանիլիք վէզաիֆի մէշրուսընտա պիր էհիյէթ վէ մահիյէթը զայրը միւթէզէլլիլէ իպրաղ իտէն Բաթրիգ հազըթթլէրինին հէմինլի խուսէմասընըն թէպաաի խրիսթիյանիյէյ բուհասի բուհանիյէլէրի թահթընտա օլարազ ինան պուլըրըլան մուաֆիյաթը բուհանիյէլէրինին մուհաֆաղսընը քեամիլ վէ քէնտի մէզհէպլէրինէ թէվֆիլէն հարէքէթ էթաիքճէ վէ Հիւքիւմէթի Սէնիյէյէ սատազաթտա պուլընսըղճա մուաֆիյաթը մէզքիւրէնին մասուհիյէթինի մուէմմէն օլարազ 1856 սէնէսլնտէ Սուլթան Մէճիտ Խան հազըթթլէրի ճանիպլինտէն չէրէֆսատըր օլան խաթթը հիւմալունը չէվքէթմազրուհէ ըաղմէն , վէ քէնտիլէրի տախի ֆարգընտա օլմատըլյարը հալտէ պիր թազըմ ահվալը նամէրզիյէյի հէնիտէն թէքըար իթմէք արզուսընտա պուլընսըղլարը ըէք ալա կէօրիւնիւյօր :

Բաթրիգ Թէրզիան էֆէնտի շէրաթի վէ տհքեամը սէնիյէնին սա-
տըզանէ սուրէթտէ վէ թէմաթի իյֆաարնտա ապա գուսուր իթմէմիշտի .
Թիւրքիայա գարշը մինգայրըհագգըն իլանը հարպ իտէն պիր միլլէթ նէզ-
տինտէ հանի Բոմատա քիսգորոպար մէճլիսի թէշքիլ իթմէք թէօհմէթիյէ
միւշարիլէյի իթհամ օլունար :

Բոմանըն իքի հիւքիւմէթին՝ հանի իթալիա հիքիւմէթիյլ Բարա-
լըզըն միւսթագիլ մէմլէքէթի օլան Վատիկան հիւքիւմէթինին բայիթալի-
թը օլարզընը վէ պու արագիի միւսաթգիլէյէ քիմսէ միւտաթէլէ իտէ-
մէյիւպ էվրօքա տէվլէթլէրի իլէ իթալիա տախի սախիլ օլարզը հալտէ
ճիւմլէսի թարաֆընտան իմշալանմըշ պուլընան պէյնէտաիւվէլ թէէմինաթ
գապանիյի իլէ հաքիմի մութլագը օլտուգլարը թաաթիգ գըլընան բարա-
լարըն թահթը իտարէսինտէ պուլունարզընը աճապա քիմ պիլմէզ :

Անտէն մոտատա տիւնեա հիւզիւնտէ պուլընան Գաթօլիք բիսգո-
րոսլարընըն Վատիկանա սէրպլսթճէ սուխուլ իթմէմինի թէէմին էյէտիկի
կիպի այնը գալանիյն իթալիանըն սալի էվրօքա տէվլէթլէրինտէն պիրիլլէ
հալը հարպտա պուլընարզը էմնտտէ պիլլէ իթալիա տիւշմէնի օլան տէվ-
լէթլէրին թէպաաարնտան պուլընան վէ Բարայը կէօրմէք իւզրէ Բոմայա
կիտէն քիսգորոպարըն Վատիկանա կիրմէսինի թէքէֆիլի իտէր . պինա-
պէրին Բաթրիգի միւշարիլէյի վէ քիսգորոպար ալէյինտէ ֆըրզաի մու-
խալիֆէնին աղզընտա տօլաշան վաթանա խոյանէթ վէ զամապլըզ կիպի
րիյաքիարանէ սէօլլէրին ճիւմլէսի պիր թէճահիւլ վէ հաթաօտ էօնճէ թէր-
թիպ իտիմիշ պիր սուի նիյէթ էսէրի օլմազ կէրէք տիր :

Սինոդ մէճլիսի իչիւն Բաթրիգ հաղլէթլէրի վէ էքսէր քիսգորո-
լար մուհարէպէնին իլանընտան էվլէլ Բոմատա պուլունմագտա օլարզ-
լարը հալտէ տաթրէի բուհանիյէլէրինտէն պուա ու մէսաֆէսի հատէպիլլէ
կէճ գալմըշ օլան պազը քիսգորոպարա հիւքիւմէթ մէմուրը պուլունմա-
լարը ճիւնէթիլլէ տաթրէի բուհանիյէլէրինտէն զայպուպէթը մուլագգաթա-
լարընա սալի հիւքիւմէթէ թահրիլէն պէյանը քէյֆիլլէթ իթմէք շար-
թըյլա Բոմայա սպիմէթլէրինէ հիւքիւմէթ ճանիպինտէն բուխսաթ վէ-
րիմիշտի : Պինտէնալէյի մուհարէպէտէն էվլէլ Բոմատա Սինոդ մէճլիսի-
նին իճթիմաընա Հիւքիւմէթի Անիյէ ճանիպինտէն տալա միւմանաաթ
օլունմամըշտը . մուհարէպէնին իլանընտան սօնրա քէնաի ումուր վէ խու-
սուսաթըլա իւթիզալ իթմէքտէ օլան միլլի Սինոդ մէճլիսինէ Պապը Ալի
տախի մուխալիֆ կէօրիւնմէտի , հաթթա 1868 թարիխինտէ մէրհում Ալի
բաշա զէմանընտա Հաաուն էֆէնտինին Բոմատա պէօլիք պիր միլլի Սինոդ
աշտ էյէտիկինի բէք ալէա պիլիյօրտը : Տէմէք օլույօր քի պունըն էմ-
սալի վար իտի . պունտան պաշգա մուհարէպէի հաղրէ էմնաարնտա զա-
թէն պալանմըշ օլան մէզքիւր Սինոդ մէճլիսինի թաալիգ էտէրէք շար-
գա ալաթէթէ պիր սէպէպի մաագուլ հօզ իտի . պիլաքիա օ շէհրտէ մէզ-
քիւր Սինոզը իթմամ իչիւն էսպապը մուճիպէի միւսթաճէլէ վար իտի :

չիւնքի խորհէն ճանտ ու զայրէթ վէ արզուլարա բաղմէն Սինող մէճլիսի նին ինիզտոր իչիւն Տէրսաստէթի ինթիսապ իթմէք գապիլ օլմայօրտը : ֆիլհագիգա Տէրսաստէթտէ ֆըրգա աէհէթի բիսգորտարըն հուրրիյէթ թինի թէհալտ իտիյօրտը , վէ միլլի հէյէթը միւշիրէնին մուճիպի նէֆրէթ հարէքէթը նիյաթ վէ թէմայիւլաթը վէ գախտէլէրի օրթատա պուլընտըղընտան մուճալիլէյհ բիսգորտարա նէյէ օղրայաճագլարընը աէրք իթտիբիյօրտը . զիրա պալատէ պտաթ ու պէյան էյլէտիյիմիզ հէնի նիզամնամէ լայիհասընտա մուճիպը էնտիչէ վէ թէհալտամիզ վէ փիսգորտար իչիւն բէք թահգիրամիզ պիր ֆըզրա մէվճուտ իաի : Մամաֆիհի քէնտի վիճտանընա վէ էսասաթա մուղայիր վէ սիյասի վէ մէզհէպի նօգթաի նազարը մուղաաֆընտան ճէմաաթըն հայաթը միւսթագիլէսինէ մուխալիֆ օլան չէյի զօրլա Սինող մէճլիսինէ գապուլ իթտիրմէկի վապիֆէ իտինմիլ օլան պիր ինթիլաֆլա ուղրաշմագ լազըմ կէլիյօրտը :

(Մապաթէ վար)

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՍԻՆՈՂ

Մեր անցեալ տարուան 27րդ թուոյն մէջ (էջ 333) խօսած էինք այն փառաւոր տօնական հանդիսութեան մասին, զոր, Սինողոսի յաջողութեամբ ի յանգ ելլելուն առթիւ, Գ Լեւոնեան հայ Դպրոցը սարքեր էր ի պատիւ Սինողական Հարց: Խոստացած էինք ներկայացնել մեր ընթերցողաց քսնի մը գեղեցիկ բանախօսութիւններ, որոնք իրենց այժմէութիւնը չեն կորսնցներ բնաւ, բովանդակած բարձր իմաստներու եւ ժանաւանդ նիւթին յոյժ կարեւորութեանը համար, սերտ առնչութիւն ունենալով դարագլուխ կազմող վերոյիշեալ Ազգային Սինողոսի հետ: Որ վասն ներկայ թուով նախեւառաջ կուտանք Արհի. Նազեան Եպս.ի Սինողական Հարց ուղղեալ հետեւեալ իմաստալից ճառը.

«Մեզ ամենուս, պատուական հարք, ուրիշ բան չմնար բայց եթէ չնորհակալ ըլլալ Աստուծոյ և ինդակցիլ Ազգային լիազուժար Սինողոսի գործոյն յաջողութեամբ աւարտած ըլլալուն համար որ հոկտմ. 15ին սկըսելով հանդիսապէս փոկուեցուաւ ներկայ Դեկ. ամսոյն 10ին: Բայց ոչ մէկուս խորհրդածութենէն խուսափեցաւ այն երջանկադէպ գուգադիպութիւնն

որով մեր Սինդակաւն գործերն վերջացան նոյն այս ամսոյս Յին, ի տօնի Անարատ Յղութեան Ամենասուրբ Կուսին: Ամենաջինջ լուսոյ մը ճառագայթն էր այն հանդիպումն որ վերականգնացուց մեր յոյն տեանելու յաջողութեամբ պսակուած մեր աշխատութիւններն և քաղեց մեր հոգի-ն հերուն ամենաքաղցր շեշտեր որդիական վստահութեան առ Տիրամայրն, որուն հետեւաբար նուիրեցինք միաձայնութեամբ մեր Սինդակաւն Սահմանադրութիւններն: Թոյլ տրուի ինձ այս բարեյաջող դիպումէն առիթ առնուլ ստուերագծելու համար մի քանի գծերն այն զուգակշռի որ կայ Եկեղեցւոյ և Տիրամօր միջև, լու ևս հաստատելու համար ի մեզ յղացած յոյսերնիս. «Համեմատենք թէ հաճոյ է, այս երկու մայրերն և երկուքին ալ ծնունդը պիտի ամրապնդէ մեր վստահութիւնը երկուքին ալ վրայ»: (Ս. Կեսար Արեւատ. Ճառ. Յղգ. Չատկի), և այդ ըլլայ նախաբան մը այն ընտանեկան տօնին զոր այսօր կ'ուզեն կատարել ի Ձեր պատիւ ի յարգանս և ի խնդակցութիւն Ձեր գլուխ հանած մեծ գործոյն համար, Գահանայապետական Դպրոցիս աշակերտներն:

Դ. դարու բանաստեղծ մը երգեց.

Իւր նսեմութեան մէջ ստուերացած անցնի թող Սինակոկան.
Վասն զի Բրիստոս զբաւիչ սիրով իրեն միացուց զԵկեղեցին.
Եւ սա է, որ Մարեմայ չնաշխարհիկ պատուովն կը փայլի
Որ մինչ Մայր է և Մօր փառաւոր անունն կը կրէ
Միշտ սակայն կոյս կը մնայ.

Ըսել կ'ուզէ այսպէս Սեդուլիոս որ միայն Եկեղեցին կրցած է Ամենասուրբ Կուսին եղական աւանդաշնորհման հասնիլ՝ ըլլալով ինքն ալ Մայր և կոյս: Եւ իրօք Բրիստոնեայ մայրերն, կը խորհրդածէ Ս. Օգոստինոս, որքան ալ բնութեամբ կոյս որդիներ ի լոյս ընծայելու պարծանքն տինոս, չպիտի կարենան սակայն պարծիլ թէ իրենց մայրութիւնը նրմաննան, չպիտի կարենան սակայն պարծիլ թէ իրենց մայրութիւնը բնուման ըլլայ Մարեմայ միշտ կուսին մայրութեան, իրենց որդիներն բնուման ըլլայ ի շնորհս իրենց ծննդեան չին կրնար իրօք Աստու-թեան նուիրեալ կոյսեր ըսուիլ: Հարցնելու որ ըլլաք թէ ո՞ւր է մայրը որ Մարեմայ նմանի, Ձեզի Եկեղեցին պիտի ցուցնեմ: Աստուծոյ նուիրեալ կոյսերն Եկեղեցիէն է որ իրենց մաքրութիւնն կ'ստանան. անկից՝ որ ամբողջովին հոգեղէն է և նիւթական մարմին չունի՝ կը ծնին հոգւով ու մարմնով մաքուր կոյսեր: Եւ արդարեւ, նոյն Աստուածային հոգին որ հարս ընտրեց իրեն Սուրբ Կոյսն, շնորհօք լին, հովանի ըլլալով անոր և այսպէս պահելով զայն մաքուր ու անեղծ իր հրաշալի արգասաւորման մէջ, նոյն հոգին կը գգուէ սիրով զԵկեղեցին իբրեւ իւր հարսն, կը ճոխացնէ զայն երկնաձիր տուրքերով, կ'արգասաւորէ զայն և կ'ընէ զայն

Հոգեւոր Մայր ամէն անոնց որ կը ծնին ծննդեամբ աւագանի մկրտութեան: Նոյն Աստուածային Բանն որ իրեն Մայր ընտրեց զՄարիամ և իր արդեամբ զերծ պահեց զայն մեղաց ամէն արապէ անոր յղութեան առաջին վայրկենէն, այնպէս սիրեց զԵկեղեցին որ անոր համար զոհուեցաւ և կացուց զայն իւր յանդիման «գի ֆ ունիցի ինչ արտա կամ աղօթողութեան համ ալ ինչ յայտպիւտաց, ալ զի ինչ սարք և անարար»: Հետեւաբար երկուքին համար ալ ըսուած է ի Ս. Գիրս. «Ամենեւին գեղեցիկ ես քոյր իմ հարսն և արատ ինչ ոչ քո ի քեզ»: Այս երկու մայրերն ամէն պարագայի մէջ միացած են. այսպէս Տիրամօր կուսին մարդկանց վրայ ունեցած մայրութիւնը հռչակուած է Խաչին ոտքը, ուր խորհրդաւոր կերպով կ'ստեղծուէր Նոր Աղամայ կողէն Եկեղեցին, և Եկեղեցին հանդիսապէս հրատարակուած է Հոգւոյն Սրբոյ ձեռք Պննտէկոստէի օրն պատկերացումով մը յորում կը տեսնուի Տիրամայրն Առաքելոց մէջ. և այդ պատկերն շատ դիւրին է տեսնել նախագծուած հին օրինաց տաճարին մէջ որ օրինակ էր Եկեղեցւոյ. Մարիամ Տաղանակ համակ ոսկեղէն, երկնային Մանանայի պահարան, Առաքեալք աշտանակներն են վառուած հոգւով սրբով:

Բայց Անարատ յղացեալ կոյսը առանձին առնչութիւններ ունի Եկեղեցւոյ հետ հաւատքի և հրամանակարգ վարդապետութեանց տարածման և պահպանութեան մասին: Անոր մէջ առաջին անգամ մեկին կերպով կը յայտնուի Ամենաուրբ Երրորդութեան խորհուրդը և կը կատարուի Մարդեղութիւնը, Քրիստոնէական վարդապետութեան երկու գլուխներն: Մարիամ ձեռք բերած էր ճշմարտութեան յաղթանակն մոլորութեան վրայ իր յղութեան առաջին վայրկենէն, որովհետեւ առաջին մոլորութիւնը, առաջին հերետիկոսութիւնն է սկզբնական մեղքն և ասկից նա զերծ մնաց: Հետեւաբար իւր նկատելու ըլլանք հաւատքի աչքով այս Կոյսը «Հուսոյ պէս սպիտակ, ամպէն աւելի թեթեւ որ սլանայ, ի վեր դէպի երկինք՝ չըջապատուած արեգակամբ, և որ ոտքին տակը կը ճգմէ ժանտ օձին գլուխը, հօր մոլորութեան և ստութեան, անշուշտ պիտի թուի տեսնել ամենագեղեցիկ պատկերն յաղթանակի անմեղութեան և ճշմարտութեան՝ մեղքի և մոլորութեան վրայ: Եւ հոս ներուի ինձ մասնաւոր կերպով երեւան հանել երկու հրամանակարգ վարդապետութեանց յարակցութիւնը՝ Անարատ Յղութեան Մարեմայ և անխալութեան Յաջորդին Ս. Պետրոսի, Բանանյապետին Հոովմայ, որ բանը աւելի եւս կը պատշաճի միւր պարագային: Ասոնք երկու հրամանակարգ վարդապետութիւններ են, յորս աւելի զօրեղ կերպով յաղթանակած կ'երեւի նոյնպիսի վարդապետութեանց հեղինակին իմաստութիւնը, յորս իր գազաթնակէտը հասած է ճշմարտութեան տիրողութիւնը մարդկային առաջին ոպստամբութեան կրկին հետեւութեանց վրայ, այսինքն մեղքին և մոլորութեան վրայ: Ինչպէս անարատ յղացեալ կուսին զարշապարին տակ թաւալած է

մեղքը՝ ջախջախած գլխով, նոյնպէս Բրիտոսի Փոխանորդին Աթոռոյն ներքեւ կը գալարի մոլորութիւնը՝ յաղթահարուած և վիրաւորեալ մահու չափ։ Երկուքին մէջ ալ մարդն է, պարզ մարդն որ կանգնած և պինդ բռնուած շնորհօք կը յաղթանակէ։ Եւ անշուշտ Նպատահամբ չէր որ Քահանայապետն, Անարատ Յղութեան վարդապետութիւնը հռչակող Քահանայապետը, կրցաւ ժամանակին սահմանել Անտալաքանութեան մեծ ճշմարտութիւնն ալ։ Ասոր մէջ եւս կը տեսնուի որ Մարիամ և Եկեղեցի կարծես մրցումի կ'լած են զիրար փառարանելու համար. և այսպէս կըրցաւ Եկեղեցին երգել յաղթական հղանակաւ. «Ուրախ լիւր, Մարիամ Կոյս զի զամենայն հերետիկոսութիւնն միայն ստատկեցեր ընդ ամենայն աշխարհ»։

Արդ հիմայ մեզ կ'իյնայ երգել այն երգը առանձին պատահութեամբ։ Մեր Պատրիարքութիւնը Բենեդիկտոս ԺԴ-ի ձեռօք վերահաստատուելու օրէն Անարատ Յղացելոյն պաշտպանութեան ներքեւդրուած ըլլալով՝ այս տարի նոյն Կուսի Տօնին օրը ի գլուխ հանեց իւր նուիրապետական կեանքի ամենահանդիսաւոր գործն, ազգային լիազուար Սինդոն, որ ըսել է, զինուեցաւ նա նոր վահանով մը մոլորութեան յարածուն յաւակնութեանը դէմ, զաւանելով և շեշտելով կաթողիկէ հաւատքի սկզբունքներն, ամրագնդեց լաւ ևս Աստուածային և եկեղեցական իրաւանց սկզբունքներու վրայ իւր կաղմակերպութեան հիմքն, որոնց կործանում կ'սպառնայ յառաջամարտ ազատականութիւնը։ Վերականգնեց ժողովրդի և կղերի մէջ վաանգուած բարեկարգութեան պարիսպներն։ Որքան մեծ ուրեմն ըլլալու է մեր վստահութիւնը յաջողութեան մասին, յաղթութեան և վերջնական յաղթանակի վրայ, երբ մեզ հետ ունինք պատերազմի դաշտին վրայ Անարատ յղացեալ Կոյսը, յաղթութեանց թաղուհին։ Նորն Բէթուլիա, մեր Եկեղեցին, դժոխային Հողեփէւնէսի բանակներէն պաշարուած է, չի սարսափինք, նոր օրինաց Յուդիթը հոն մեզի հետ է և սիրտ կու տայ մեզ մասնցոյց ընելով յաղթականօրէն թշուառոյն ջախջախուած գլուխն իր սաքին տակ. «Ահաւստիկ Հողեփիւն կործանեալ և գլուխ իւր չէ առ նմա»։

Օն անդր ուրեմն սիրտ տոնունք և քաջալերութիւնք, ո՞վ պատուական Հարք. հնչենք վստահութեամբ յաղթանակի ու մեր երախտագիտութեան երգն առ Մարիամ նոյն բառերով որոնցմով ողջունեց զՅուդիթ Բէթուլուայ ժողովուրդը. «Դու բարձրութիւն Երուսաղէմի, դու պարծանք Ազգիս մերոյ»։ Ողջո՞յն ով Անարատ յղացեալ Կոյս։

Եւ քանի որ Անարատ Յղացելոյն միացուցինք Հաովմայ Քահանայապետին խորհրդածութիւնը, անոր ալ ուղղինք մեր ողջոյնը, վստաշեշտ մը երախտագիտութեան, հիացման ու խանդալաւ հոգւոյ։ Զինաւփայլ կերպարանքն մեծ Ծերունւոյն որ բազմած է անխալ Վարդապետ Պետրոսի Քահուն վրայ, իմաստուն Առաջնորդ կաթողիկէ աշխարհի, ի-

րաւանց աներկիւղ ջատագով, արդարութեան և ճշմարտութեան պատգամաւոր, մեզ կը ներկայացնէ ուղիղ մարդուն, անբաւար քահանայի, զօրեղ և քաղցր Դիաւապետի, հեղ ու վեհանձն Վեհապետի տիպարն: Այս ծայրագոյն Քահանայապետին, Պիոս Ժ.ի կը պարտինք մեր կարեւոր գործոյն ամէն բարիքը, անոր ուրեմն ուղղմանք մեր սիրոյ, յարգանաց և հրապտակութեան տոկոսանկեղծ զգացումներն:—Կեցցէ՛ Պիոս Ժ.:

Ձեզ ալ պատուական Հարք, եռանդնալից Պատրիարք, բնորենազ Եպիսկոպոսունք Հայաստանի, կը ծափահարէ այսօր խանդեռանդն մեր Դպրոցը, յորում կանգնեցիք մեր Եկեղեցւոյ ժամանակակից պատմութեան տմենահանգիստաւոր յիշատակը, որ պիտի չմոռցուի բնաւ և պիտի տօնախմբուի մանաւանդ զինքն պատուով տոկոսամեծ չիպուածոց շարքին մէջէն իրիւս ամէնէն աւելի աչքառու: Դուք ձեր եռանդովն ու անձնուրացութեան ոգեով զոր ցոյց տուիք հոս համախմբուելով, բարեպաշտութեան և ամէն առաքինութեանց բարի օրինակներովն, զորս տուիք մօտէն Դրոյրոցիս մեծաւորաց և աշակերտաց, արժանի էք անոնց ամբողջ հիացման և զրաւած էք սրտերնին: Այս պատճառաւ ալ մենք օգտուելով միշտ ձեր բարեպաշտութեանէն կը համարձակինք ներկայանալ ձեզ աշակերտօք Քահանայապետական Լեւոնեան Հայ վարժարանիս համեստ հանդիսութեամբ մը զոր կ'ընծայենք ի պատիւ ձեր. ընդունեցէ՛ք կարեկցաբար»:

(Շարո-նակելի)

«ԼՈՒՍԱՐԵՐ ԱՐԵԻ»Ի ՅՕԴՈՒԱԾԸ

Կ'որոտտայինք հետեւեալ յօդուածը: Ջոյն պորտուակող թերթը Եփեսոս-էն կուգայ, և էջմիածնական թէրթ մըն է: Յօդուածը գրուած է Էջմիածնական Հայէ մը որ կը բնակի աւելի հեռու, ի Սուտան: Մենք զայն կը հրատարակինք ոչ թէ Ամին. Թէրզեան Կ. Պատրիարքին հասցէին որորունսկած գովարանութեանց համար, այլ պրամարանական եղբայրացութիւններուն լրջութեան ստուակէտով. հախ՝ որովհետեւ կաթողիկէութիւնը իր անխորտի սկզբունքներն ունի զորս չկրնար զոհել. զեղեցիկ խրատական մըն է այդ հետեւութիւնը, ամէն անօգուտ պայքարէ դադրելու, երկրորդ՝ որովհետեւ կաթողիկէ մնալով՝ սկզբունքներու դէմ մտքաւոր և ազատականութեան հետապնդելը այնքան անարտաբանական է որ մեր գոյութիւնը գոհ աչքերով չտեսնողներուն՝ մեղի վտտակոր և անարատարեր յոյսեր կը ներշնչէ, որով Դաւապարեան էֆ. ի Կ. Պոլիս, Սէքսէնեան էֆ. ի Սուտան կոչ կ'ընեն, ձայն կուտան, կը հրաւիրեն ի ծոց

իրենց եկեղեցւոյն — աւա՛ղ — յանուն տրամաբանութեան, ինչպէս կ'ըսեն :
Եւ թերթ մը (Ժամանակ, թիւ 1035) համարձակութիւնը կ'ունենայ, երազներ
հետապնդելով, 1914 ի Գումգաբուի Ազգային Ժողովներու մէջ հակառա-
կորդներէն զոմանս յականէ յանուանէ, մինչեւ իսկ քանի մը կղերականք,
էջմիածնականացած և անդամակցած երեւակայելով : Ո՞վ կը խաբուէր ար-
դէն Ազգ. Ժողովի իբր թէ վերացական, պղատոնական խրախոյսէն, ող-
ջոյնէն, գրգռութենէն... իրենցմէ ասկէ զատ ի՞նչ կրնար սպասուիլ ...
Գիտենք որ մեր կաթողիկէ ժողովրդենէն խաբուածները կը լուսաւորուին
և կ'օգտուին, վտանգը խանայով. և նշմարելով թէ սխալ քայիւրն,
— մանաւանդ սկզբունքներու մասին — մինչև ո՛ւր կրնան առաջնորդել...

Ահաւասիկ յօդուածը.

ՀԱՅ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

«Հայ-Հռովմէականներու Կ. Պատրիարքը, Թէրզեան Սրբազան, ներ-
կայիս բաղդակից ըլլալ կը թուի Հայ-Եկեղեցիի նախկին Պատրիարքին՝
Օրմանեան Սրբազանի : Բայց ինչպէս որ ժամանակին ընթացքին տակաւ
հանդարտելուն գրգռուած զգացումները և պաղարիւնն ու ողջմտութիւնը
եկան հաստատել թէ անպետ անիրաւութեան մը ենթական եղած էր այս
վերջինը, նոյնպէս ալ պիտի ըլլայ օր մը որ ամէն ոք անտեղի պիտի նը-
կատէ այն բոլոր անարգանքները որ գործադրուեցան Թէրզեան Սրբազա-
նի անձին վրայ :

Այս հեռաւոր անկիւնէն, ուր միայն Պօլսոյ թերթերը կը կաղմեն
մեր տեղեկութեանց աղբիւրը, անհնար պիտի ըլլար ինձ այս հզրակացու-
թեան յանգիլ, եթէ անձամբ, չատ մօտէն ճանչցած չըլլայի Թէրզեան
Սրբազանը :

Հայ-Հռովմէականներու ներկայ Պատրիարքը հաստատ, անփոփոխ
նկարագրի թիւ մըն է : Իր համոզումները ու հաւատալիքները իր պաշ-
տեկի կռուքերն են, և անկեղծութիւնը՝ զանոնք ապրելու և գործադրե-
լու մէջ՝ ամենէն ցայտուն մէկ երեւոյթը իր նկարագրին : Թէրզեան
իտէսլ կրօնաւոր մ'է, ինքզինքը նուիրած՝ մէկ կողմանէ Աստուծոյ, իր
ըմբռնած և ընդգրկած վարդապետութիւնով, այլ միշտ հոգեով ու սրտով,
ու միւս կողմանէ մարդոց՝ իր հասկցած կերպով ու միջոցներով : Իսկ խո-
նարհամտութեան, հեղութեան ու համեստութեան մարմնացումն է նոյն
Թէրզեան Սրբազան :

Արդեօք մէկ օրէն միւսը Պատրիարքական աթոռը այլափոխեց
այս նկարագիրը : Ես այդ բանին չեմ հաւատար : Վստահ եմ թէ Թէրզ-

եան երբ կը սնդէ իր հայեցակէտին վրայ, ինքնակալ մը, բռնաւոր մը դառնալու համար չէ երբէք, այլ իր համոզուած կրօնական մէկ սկզբունքը հետապնդելու համար սոսկ։ Ասիկա փառք մըն է նոյնիսկ իրեն համար, և միշտ ի մտի ունենալու ենք թէ Թէրզեան կաթողիկ կրօնաւոր մըն է գերազանցապէս։

Որով, բոլորովին անտեղի և այսպնելի կը գտնենք Թէրզեանի անձին դէմ մղուած պայքարը և անոր ուղղուած անարգալից վարմունքները։

Մեր Հայ-Հռովմէական եղբայրները սխալ պատնէշի վրայ են, ու սըխալ տեղ կրակ կ'ընեն։ Հասունեանէ վերջ ինչպէս Թէրզեանը երեւցաւ, Թէրզեանէ վերջ տակաւին ուրիշ շատեր կրնան երեւալ բեմին վրայ։ Պէտք է անձնականութիւնը մէկդի դնել, և զբաղիլ խնդրոյն սկզբունքովը՝ դաւանական և կառավարական տեսակէտով դիտուած։ Երբ երեսփ. Ժողովը օրինաւորապէս և տրամաբանօրէն կարենայ ցոյց տալ թէ կաթողիկ դաւանութիւնը կը հաստատէ իր հայեցակէտը, և երբ կարենայ զայն հաստատող և գործադրելու տրամադիր կառավարութիւն մը գտնել, Թէրզեան ինքնին կը համակերպի կամ տեղի կուտայ։

Իսկ այն պարագային երբ անյաջողութեան կը մատնուին այդ ձեռնարկին մէջ, — ինչ որ շատ հաւանական ըլլալ կը թուի — պարտին՝ տրամաբանօրէն՝ փնտռել եկեղեցի մը, որ իրենց հայեցակէտին, իրենց կրօնա-վարչային ըմբռնումին գոհացում տալու բնոյթն ունենայ։ Ու հոս մարդ կը սկսի մտածել թէ արդեօք նախախնամութեան մատը չիկա՞, ներկայ տազնապին մէջ, որ կ'ուզէ մղել մեր Հայ-Հռովմէական եղբայրները խորհրդածելու թէ՛ ի՞նչ բանաւոր պատճառ կար ժամանակին բաժնուելու այն հայրենի եկեղեցիէն, և ի՞նչ ստիպողական պատճառ կայ հիմա չի վերադառնալու այն մայր-եկեղեցին, որ կրօնա-յարանուանական բարեջողումին մէջ ունիլ յառաջացեալ և աւելի բարեկարգեալ դիրքի մը վրայ է քան թէ մեզի այնչափ հեռու ու օտար Հռովմի եկեղեցին։

Սուտան

ՅՈՎՀ. ՍԷՐՍԷՆԱՆ



ԱՆԿԻՐԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԵՒ ԼԵՎՈՌՆՈՅ ՔԱՂԱՔԸ

Ինչպէս խոստացած էինք մեր 31 թուոյն մէջ (էջ 41), Անկիւրիոյ արժանընտիր Վիճակաւորին նկատմամբ Լիվոռնոյ քաղաքին տաժած աննման սիրոյն արտայայտութեան իբր ճշմարիտ թարգման յառաջ պիտի բերենք հոն հրատարակուող Fides թերթին պարմանակութիւնը, հաւատարիմ թարգմանութեամբ: Անա ուրեմն ինչ որ կը գրէ այդ թերթը:

ԳԱՂԱՏԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՐԶ. ԳՐԻԳ. ԳԵՐՊԾ. ՊԱՆՍՊԱՆԵԱՆՆԻ

ՀՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԼԻՎՈՌՆՈՅԻ ՄԷՋ

«Սոյն ընդունելութիւնը թէև նշանակած ենք մեր անցեալ թուոյն մէջ, բայց չենք կրնար ընդդիմանալ մեր ներքին մղումին՝ աւելի ընդարձակօրէն նկարագրելու Արհ. Գրիգ. Եպս. Պանապանեանի ժամանումը հոս՝ ուր ինք առաջ Մեծծուոր Ժողովրդապետն էր Հայոց, և այժմ Եպիսկոպոս իր ծննդավայրին՝ Անկիւրիոյ: Անցեալ չարախօս օրուայ պատիւններն որոնց մենք ալ բախան ունեցունք ներկայ ըլլալու և պաշտօնապէս մասնակցելու, ոչորոյ ու երախտագիտութեան զգացումներ էին՝ զորս կը ձօնէր Կաթողիկէ Լիվոռնոն՝ Ս. Հօր ու Մեծաւորաց իշխանութեամբ Եպիսկոպոսական բարձր ատրիճանին արժանացող մարդուն ու քահանային, Պանապանեան Գերապայծառին՝ որու արժանիքը գերիվերայ է քան ամէն զբուսաբիք:

«ԿԱՅԱՐԱՆԻՆ ՄԷՋ — Արհ. Պանապանեան Գերապայծառի ընդ առաջ գնացած էին մինչև Կիլիկիական կայարան, մեր Արհ. Եպիսկոպոսն իր հետ ունենալով անձնական քարտուղարը Տօն Լէոնարաօ, ընդփոխանորդը Մօն. Մօրթէոյ և Կանոնիկոս Մարթուչչի ի զիմաց Մայր եկեղեցւոյ Կանոնիկոսաց դասուն. Տօն Էճիսիօ Փէրա ի զիմաց Թեմական Վարչութեան և Լիվոռնոյի Հայոց եկեղեցւոյ Վարչական խորհրդոյն, Օրէսթէ Ֆրանչէսքի՝ Հնարական Միութեան, իննալոյսական ճաշարանի և Կաթողիկէ ընկերակցութեան կողմանէ, Գաղինի և Մածժօնի՝ Եփէս թերթին կողմանէ, Տօն Պլանքի՝ որ արդէն Հայկական եկեղեցւոյ մէջ կը պաշտօնավարէ և ուրիշ շատ մը բարեկամներ նորընտիր Եպիսկոպոսին:

Եւ ահա հոս կը յաջորինք տեղեկանալ (արդէն ո՞ր մէկ գաղանիք կարելի է պահել լրագրողներէ) թէ Մօն. Ճիանի, Լիվոռնոյի Եպիսկոպոս պօսը, նուիրած է Պանապանեան Գերապայծառի այն սակեղէն շղթան՝ ու

բու անցնում է Ս. Հօր կողմէ իր ուղղակի անուանած հայկոպոսին արժանաճ ճոխ լանջախաչը:

Ժամը 15ին, այսինքն չուրջ մէկ ժամ յապաղմամբ, կը հասնի վերջնական կառավարմանը: Երկու հայկոպոսներն ալ սրտաղեղ կ'ողջագուրեն զիրար: Նոյն սրտաղեղումն ու մանրամասններ կը բուրէ նաեւ բոլոր միւսներուն հետ: Պահապանեան Գերապայծառի կ'ընկերանայ նաեւ իր քոյրը Օր. Նեկտար, Լիվանայի նորընտիր ժողովրդապետը Գեր. Պետրոս Վ. Աճէմեան եւ Գերպ. Գէորգ Ծ. Վ. Թէրզիարչեան՝ մասնաւոր Պատուիրակը Նորին Գերերջանկութեան Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեանի, Կաթողիկոս Պատրիարքին Կիլիկիայ:

Առաջին կարգի սրահին մէջ կը կատարուին ներկայացման ձեւակերպութիւնները, յետոյ իւրաքանչիւրն իրեն յատկացուած կառքին մէջ նստելով, կ'անցնին Գարուշչի եւ Ծոյա փողոցներէն, Լարթէրէլ պողոտայէն, Գտրօ Ալպէրթօ հրապարակէն, Վիթթորիո Էմմանուէլէ պողոտայէն ու կը հասնին:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ. — Հայոց Եկեղեցւոյ դրան առջեւ ժամերէ ի վեր կ'սպասէ արգէն հոծ բաղմութիւն մը: Արեւելեան Եկեղեցւոյ զգեստներ հագած հոն կ'ընդունին զինք Հ. Թօպիա Անայիսի՝ Սիրօ-Մարմնիթ համայնքէն եւ Հ. Յովս. Շալուպ՝ Յոյն Կաթողիկէ հասարակութենէն, ինչպէս նաեւ Կանոնիկոս Ֆիլիփի. Հ. Պարսի՝ Փրանկիսկեան կարգէն եւ Մատենա եկեղեցւոյն ժողովրդապետը, Հ. Սալիսթիօ՝ Ս. Երրորդութեան կարգէն եւ ժողովրդապետ Ս. Ֆէրաինանաօ եկեղեցւոյն, նմանապէս Գաւիլի, Սքալպարէլլա, Մաղինի, Պուլլէրի եւ ուրիշներ:

Պահապանեան Գերապայծառ իսկոյն Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետական զգեստները կը հագնի եկեղեցւոյ մէջ, հանդիսաւոր մուտքը կը կատարէ, կը համբարէ Մարմնիթ ժողովրդապետին ներկայած խոչը՝ երկրպագելով, եւ Յոյն կաթողիկէ ժողովրդապետէն խնկարկուելով «ՌՎ Էրանէլի» երգովը, ինք՝ բարի հովիւ, հաճոյ յաչս Տեառն, ժողովրդէն շրջապատուած հանդիսապէս կը յառաջանայ դէպի Աւագ խորան ուղղուելով:

Հոս երկրպագելով Ս. Հաղորդութեան, պատշաճ երգ մը կը գեղգեղուի, որմէ վերջ Պահապանեան Գերապայծառ կը զրուցէ եկեղեցւոյ պաշտպան սուրբին՝ Ս. Դրիգոր Լուսաւորչի ազօթքը:

ՄՕՆՍԻՆԵՕՐ ՃԻԱՆԻԻ ՈՂՋՈՅՆԸ. — «Կարող չեմ բացատրել Ձեզ իմ սրտիս ուրախութիւնը, կ'ըսէ հայկոպոսը Պահապանեան Գերապայծառի ուղղելով, երբ տմէն ոք իր տեղը զբաւած է, կարող չեմ բացատրել Ձեզ իմ սրտիս ուրախութիւնը ողջունելով Ձեզ այս հանդիսաւոր վայրկեանին, Հայրապետական զգեստներով պճնուած ու կնքուած տեսնելով հայկոպոսական կնիքովը: Փառք Տիրոջ ու Հնորհակալութիւն մեր Գերազոյն Քահանայապետին ու Նորին Երջանկութեան Պօղոս Պետրոս ԺԳ.

Թէրզեան Կաթողիկոսի՝ որոնք սորժանապէս բարձրացուցին զՁեզ այդքան պատուոյ, Երանի՛ Ձեր հայրենիքին որ պիտի ընդունի զՁեզ ու պիտի տեսնէ փողփողիլը Ձեր վրայ յարածուն՝ եպիսկոպոսական առաքինութիւններուն ալ ինչպէս այնքան շքեղօրէն փայլեցաք քահանայական առաքինութիւններով մեր այս քաղաքին մէջ :

Համետ է մեր այս տօնը, Դերապայծառ, և անհամապատասխան այն սրտեղբուրն՝ որով մեր սիրտը կը փափաքէր ու կ'ուզէր ընկ. բայց նուազ անկեղծ չեն այն սիրոյ բուզիս զգացումները զորս կը նուիրենք Ձեզ մենք ու Լիվոնոյի ամբողջ կղերն ու ժողովուրդը :

Դուք կու գաք Յաւիտենական Քաղաքէն՝ ուր ներկայ գտնուեցաք ու մասնակցեցաք այն Մինդոսին որ անմահ կոթող մը պիտի մնայ Հայ Ազգին պատմութեան փառաւոր էջերուն մէջ, ու կու գաք՝ Եպիսկոպոսական ատարձանի վայել խոնարհութեամբն ու համեստութեամբը. Դուք չէիք ուղեր ընա՛ւ առարկայ ըլլալ շքեղ ընդունելութեան մը, բայց մեր Լիվոնոն չէր կրնար զսպել ըմբոստացումը իր ազնիւ սրտին, ու ելաւ Ձեզ դիմաւորելու : Կառաւորութեն վար իջած ատեննիդ ես զՁեզ ողջագուրեցի, Ձեզ համբուրեցի, այդ գիրկընդխառնումին, այդ համբուրին մէջ կը գտնուէր նաեւ գիրկընդխառնումն ու համբուրը ամբողջ Լիվոնոյի : Ինծի կ'ընկերանային նաեւ ներկայացուցիչները մեր Մայր Եկեղեցւոյ Կանոնիկոսաց դասուն, ժողովրդապետներուն յանձին անոր՝ որ հոգին եղաւ այս ցոյցին, մերձակայ Ս. Սնտոն եկեղեցւոյ ժողովրդապետը՝ զոր դուք այնքան կը սիրէք ու կը յարգէք. կղերն հետ միասին նշմարեցինք Լիվոնոյի կաթողիկէ Մամուլին ներկայացուցչութիւնը յանձին Ֆէֆա թերթի առաջին խմբագրին. յետոյ պատուիրակութիւնները թեմական վարչութեան, Կաթողիկէ ընկերակցութեանց, ինայողական ճաշարաններու, ընտրական միութեան, և ուրիշ շատերու. հոն ունինք ժողովուրդը որ կը ծափահարէ Ձեզ ու կը սպասէ Ձեր Օրհնութեան : Այս միահամուռ սիրոյ ցոյցերը միակ արդիւնքը են հրախառնութեան՝ զոր մենք կ'զգանք ու պարտաւոր ալ ենք զգալ Ձեզ հանդէպ :

Կարճ պիտի ըլլայ, կը յարժ. եպիսկոպոսը, կարճ պիտի ըլլայ Ձեր ընտելութիւնը մեր մէջ, պիտի թռչին այս օրերը մենէ, բայց անոնց քաղցրը յիշատակը Ձեզ պիտի ընկերանայ ամէն վայրկեան Ձեր քաղաքին մէջ, ուր պիտի վերակենդանացնէք փառքը Ս. Գրիգոր Լուսաւորչի, ուր պիտի փայլին Ձեզմով, պառւով՝ թագն ու գաւազանը, ուր ոչ միայն Հայաստանի, այլ բոլոր Արեւելքի հերձեպներն ալ պիտի վերադառնան, ինչպէս կը յուսանք, միակ փարախը՝ Հովուի մը ներքեւ :

Այսպէս, մէկ սիրտ, մէկ փարախ, մէկ Հովիւ միայն եղած, պիտի տեսնենք իրագործուած առաւածային խոստումը, և պիտի գիտնենք ցնծագին տօնելու, յաւիտենական Հայրապետութիւնը երկնից մէջ՝ ուր պիտի փառաւորուինք ու երջանիկ ըլլանք ամէնքս ալ :» (Շաբոնապէս)

ՆՇԵՆԻՆ ԵՒ ՕՐԻՈՐԳՆ

Օրիորդն առ Նշենին ծաղկեալ.

Դունաս է դեռ հողը. լեռանց ձիւնապատ եմ զազարունք.
Ո՛վ անխոհեմ նրբեցիւղ դո՛ւ, է՞ր ծաղկօք կը զսրգարուիս.
Տե՛ս. խիստն Հիւսիս սեւ սեւ ամպեր կուտակէ.
Ահա վրչէ եւ ցուրտ սաստիկ. պիտի կծկիս յորհանիւղ.
Երբ դառն ու ձոր գեղածիծաղ զարնանաբոյր դալարեօք
Պննուիմ, դու՛ ո՛վ անզոյեղ, յանգստիս սուգ վարակիս:

Նշենին առ Օրիորդն.

Ո՛վ նազելիդ, դուն ալ ունիս ին կուսութեան սուրբ ծաղկն.
Զօր ստեղծուած ո՛չ մի ծաղիկ ի բոյր ի զեղ կը յաղթէ.
Սակայն աւա՛ղ. կը մասնես զայն դաժան հողմոց՝ ամպրոպաց,
Ո՛վ անզոյե, մինչ կրնայ զայն խաւրեցնել քեքեւ շունչ.
Այս իմ ծաղիկ քեւ անգութ սառնամանեօք քաւրեւով,
Գարձեալ կ'ծաղկի. բայց եթէ փուկ իյնայ, ա՛յլեւս չի ծաղկիր.

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Ազդ. ձեռնարկի Շրէյթեր թերթը երկուշաբթի առաւ թուոյն մէջ Ամենապ. Կ. Պատրիարք Պօղոս Պետրոս ԺԴ. Թէրզեանի հետ իր ունեցած մէկ տեսակցութիւնը հրատարակած էր: Արդ՝ կը յայտարարուի որ նոյնին մէջ ինչ ինչ անճիշդ կետեր սպրդած են կամ նախադասութիւններ այլափոխուած:

Բաւել-լիւի Գերբաշեանի տեղեկ. — Մայրաքաղաքիս զրեթէ բոլոր հայ թերթերն ալ իրենց 15|28 փետր. թուոյն մէջ մեծազորոգ կ'աւետին սա հեռագիրը. «Կը թոյլատրենք ոսկորներու ալուր փոխադրութիւնը Հայ եկեղեցւոյ աւանդութեանց եւ սովորութեանց համաձայն, ձեր վերին հսկողութեան տակ եւ հանդիսական արարողութեամբ»: —

Տեղակալ ԳԵՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ու կը մանրամասնէին եղած կարգադրութիւնները, նոյն իսկ յաւելով թէ խոստացուած 15,000 ոսկին պատրիարքարան զրկուած է արդէն Թալէաթ պէյի կողմէ:

Բայց հետեւեալ օրն իսկ ջուրը ինկած էր այս բոլոր ճարտար հիւստածքը. զի պատրիարքարանի կողմէ հաղորդուած սոյն հեռագիրը չէր է եղեր: Ոմանք — նաեւ եպիսկոպոսական աստիճանէ — հեռագրած էին յէջմիածին որպէս զի այս հրամանը մերժուի, Տեմենք թէ կարելի պիտի ըլլա՞ր կամ պիտի ուզուի՞ր զանոնք նշաւակել...: Հեռագիրը

խարչախելու ամբաստանութիւնները կը ծանօնային Պալագեան Ծ. Վ.ի, Բերայի Տ. Սահակ քահանայի, ու մինչեւ իսկ Պատրիարքական փոխանորդ Դուրեան Ծ. Վ.ի վրայ... Բայց ահա Պալագեան Ծ. Վ.ի 50 ոսկի յանձնուելով Պուլկարիս զրկուիլը նորանոր կասկածներ արթնցուցին, սոյն իրադարձութիւններու մասին. մինչ այլուստ պահպանողական մաս մը կը ջանար նոր երևոյթ մը տալ սոյն խնդրոյն՝ պաշտպանելու համար կառավարութեան հետ զոյացած համաձայնութիւնը:

Կ'ըսուէր թէ, էջմիածնի Կաթող. Տեղապահ, որ հեռագրած էր թէ ինք ձեռնհաս չէր այս մասին հրաման տալ, ցորչափ Կաթողիկոսական ընտրութիւնը վաւերացած չէ, եթէ պինդ մնար իր այդ որոշման վրայ, այն պահուն կրօնական ժողովը իր իսկ պատահանատուութեան տակ պիտի արտօնէր ոսկրերու փոխադրութիւնը:

Հակառակ այսքան իրարանցումի, զոր լրտգրերէ ոմանք, չգիտցուի ինչ պատճառաւ ուզեցին արտակարգ կերպով հրահրել, վերջապէս Պալագեան Վ.ի Սօֆիայէն բանակցելով ձեռք բերած յաջողութեան համաձայն, էջմիածնէն հրամանը տրուեցաւ եւ 15,000 ոսկույ գումարը գանձուելով յանձնուեցաւ Տէօշ Պանգի փետր. 21. իսկ ոսկրերու փոխադրումը մեծ հանդիսութեամբ պիտի կատարուի Դշ. օր 22 փետրուար, ու զետեղուին Հոգ. Տիրոջ դամբարանին մօտերը:

ՆԵՐՓԻՆ. — ՊԵՏԵՐՔԻ վրայ Խտալացոց բրած ռմբակոծութեան իբր հետեւանք նախարարաց խորհուրդը իր 14 փետրվար նոսրին մէջ որոշեց Պէյրութի, Դամասկոսի, Հալէպի նահանգներուն մէջ գտնուած բոլոր իսլամադատականները վտարել: Նոյնպէս զեկուցուեցաւ Լիբանանի կառավարչին որ հոն եղող իսլամոյններն ալ 15 օրուան մէջ վտարուին:

* Միհրան Է.Ֆ. Գարագաշեան Եւմոական նախարարութեան խորհրդական անունուած է, եւ ասոր տեղ նոյն նախարարութեան ընդհ. հաշուակալութեան տնօրէն կարգուած է Սերովքէ Է.Ֆ. Պէրպէրեան: Ասկէ 25 տարի առաջ, Միքայէլ բաշայի հսկողութեան ներքեւ, սոյն երկու կարող պաշտօնեայք կազմակերպած էին երկրագործական դրամատունը: Մեր շնորհաւորութիւնները:

* Որոշուեցաւ որ ականակուռ պատուանշան ու սուր մը նուիրէ Կայսրը՝ Սընուսիներու շէյխին, ի վարձ Իսլամութեան համար քրած զոհողութիւններուն:

ՄԻՋԱՂԴԱՅԻՆ. — Լոնտոնէ եկած վերջին հեռագրերը կը զուժեն թէ հանքային գործաւորներու եւ հանքատէրերու համաձայնութիւնը կարելի չլլալով, ընդհանուր բանթող ըրին գործաւորները: Ասոնց թիւը ցարդ Մէկ ՄԻԼԻՈՆԻ կը հասնի: Իսկ 15 օրուայ մէջ եղած փնասը 2 միլեար ֆր. կը հաշուուի: Նկատուած ուրիշ վնասներն ալ ահաւոր են:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ—ԷԼԷԻԷ	65
Ազգ. Պատրիարքական Սինոդ	69
«Լուսաբեր Արեւ»ի յօդուածը	73
Անկիւրիոյ Եպ. ք. եւ Լիվոնոյ Բաղաբ.	76
Նեեցից եւ Օրիորդը	79
Տեղեկագրականք	79

Ա Ր Տ Ո Ն Ա Տ Է Ր
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐԿԵ-ԽԱՐԱԳՐԱՎԵՐ
ԳԵՈՐԳ Մ. ՎՐԴ. ԹԷՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Ռ. ՍԱԳՆԱՆ

Կալարա Բուրճուկու խան

ԿԱՐԵԻՈՐ

Մեր հին թատնորդաց կը շարունակենք ղրկել Կարուկի-
կէ Արձազանգի քիւերը: Սակայն պէ՛տք կը զգանք յաճախելու
քէ այլևս պիտի դադրեցնենք ղրկելու անոնց որ չեն փութար
թատնորդ գրուիլ: Հետեւոքար անոնք որ կ'ուզեն ունենալ այս
օգտակար քերքը, հաճին փութով իրենց թատնորդագինը հաս-
ցընել քերքի Տնօրէնութեան:

Ա.Ձ.Դ.

Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ (Բերա, Սագըզ-Աղած) լուր օ-
րերու թիւ արտարագաց ժամերն են. 7, 8, 9, 10 եւր. իսկ կիրակի ու տօն օրերը՝
ժամը 7.30, 8.30, 9.30, 10.30 եւ 11.30ին կը մատուցուին Ս. Պատարագները:

Սոյն Մեծ Պահոյ ամէն Ուրբաթ առաւօտ եօթն խոցի ջերմեռանդութիւնը կը
կատարուի եւ օրհնութիւն կը տրուի ի ժամ 9.30: Իսկ կիրակի օրեր, ԵՐԵՎԱՆԵԱՆ
ԽԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, ԲԱՐՈՋ Թուրքերէն լեզուաւ եւ Օրհնութիւն տեղի կ'ունենայ ի ժամ 4:

Քարոզիչն է՝ Դեր. ՄԱՏԹ. Ծ. Վ. ԴԱՐԱԿԷՕԶԵԱՆ

